

են, ասաց Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսն՝ խնդիրք մեր ի թագաւորէն, եւ երկարութիւն կենաց խնդրեմ այլ եւս վասն Ձեր: Անցին աստ եւ այլ բանք վասն բարեկամութեան, եւ շնորհակալ եղեալ մեկնեցան ի միմեանց:

Ի 6/18 Մարտի շաբաթ օրն վերստին փիղերով իջաք յեզր գետոյն եւ մտեալ ի շողենաւ՝ յընթացս 9 աւուրց հասաք ի Ռանգուէն ի 14/26 Մարտի: Նստեալ անդ քանի աւուրս ի 21/2 Ապրիլի ի Գալստեան Կիւրակէի մեկնեալ ի Ռանգուէնայ շողենաւով՝ ի 25/6 Ապրիլի հասաք ողջամբ ի Կալկաթայ:

Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսն տխրեցաւ յոյժ, որպէս եւ ես տխուրեմ աստանօր ի գրելս. զի ի գիշերին՝ յորում լուսանայր Ծագկաղարգի Կիւրակէն՝ Սարգիս Աբեղայն Աղեքսանդրապօլսեցի՝ ձեռնասունն նորին Գերապատուութեան փոխեցաւ առ Աստուած ի Կալկաթա հիւծական ախտիւ եւ թաղեցաւ ի նմին աւուր յեկեղեցւոյն տեղոյս: — Եղիցին կամք Տեառն օրհնեալ, եւ տացէ ձեզ Տէր կեանս երկարս. չէ հարկ գրել թէ զի՞նչ ցաւ զգացաք եւ զգամք միշտ: — Այսչափս բաւական վասն ճանապարհորդութեանս, գամք եւ առ գործս: . . .

ՎԱՆԱՄԱՅՐ ԵԻՓԻՄԷ.

Տփիսեաց Առևտնաց Վանուց Մայրապետն վախճանեալ լինելով, Միաբանուհեաց ընտրութեամբ բարեպաշտուհի Եւփիմէ կոյս Բհհպութեանց կարգեցաւ

ի վանամայրութիւն յիշեալ Անապատին, զոր եւ Վհհ. Հայրապետ օրհնութեան Կոնդակաւ հաստատեց:

ՀԱՐՅԱՔԵՆՈՒԹԻՒՆՔ ԱՇԱԿԵՐՏԱՅ

ՃԵՄԱՐԱՆԻ.

Գեր. Գաբրիէլ Արքազան Արքեպիսկոպոս Այվազեանց յՅն ամսոյս վերադառնալով ի Տփիսեաց, Յունիս 7 էն ց 11 ն՝ հազեւ ճաշի եւ փոքր ինչ հանգստութեան միջոց տալով՝ Ճեմարանի Վարանոցական շրջանին՝ Եախապատրաստական՝ Առաջին՝ Երկրորդ եւ Երրորդ դասարանաց աշակերտաց առ այժմ Կրօնագիտութեան՝ Հայկաբանութեան՝ Ուսուցիչներ՝ Գաղղիարէնի եւ Բնական Պատմութեան հարցաքննութիւնքը կատարեց:

Իսկ յառաջակայ Օգոստոս ամսոյ վերջերում թուաբանութեան, Բնագիտութեան եւ Աղգային Պատմութեան, Աշխարհագրութեան, Ուսուցաց Պատմութեան եւ Ուսուցաց Աշխարհագրութեան (Ուստաստանցի աշակերտաց), Հայկական Չայնագրութեան, Գծագրութեան եւ Վայելչագրութեան հարցաքննութիւնքը պիտի տեսնուին, նաեւ տարեկան եւ Ճեմարանի Տօնախմբութեան հանգէսը կատարելէ զկնի՝ Ճեմարանի Տեսչութեան Վարչութիւն թէ ամսագրոյս միջոցաւ եւ թէ առանձին տետրակներով պիտի հրատարակէ հարցաքննութեանց արդիւնքը եւ Ճեմարանի Տեսչութեան ընդարձակ տեղեկագիրը:

— Գեր. Գաբրիէլ Արքազան Արքեպիսկոպոսն ԵՅ ն ամսոյս մեկնեցաւ ի Ս.

Լջմիածնէ իւր Վ իճակին ոմանց կողմանց
կարեւոր այցելութիւնքը տալով պէտք
եղած խնամքները նկատելոյ և հոգալոյ հա-
մար, և Օգոստոսի վերջերում՝ ներկայ
պիտի լինի ի Ս. Լջմիածին։—

ՅՐՏԱՀԱՐԻՒՆ ԱՅԳԵԱՅ

Ի Գ Զ Լ Ա Ր.

ԵՒ ՏԵՕՐԷՆՈՒԹԻՒՆՔ ՎԵՂ՝ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Յանուն Վեհ. Հայրապետի Ե 3-էն
Յունիսի տարւոյս ուղղեալ Գլխարու
Հայոց փոխանորդ Արժ. Ագամ Վարդա-
պետ Տէր՝ Նիկողայոսեանի յայտարարու-
թեանէն հետեւեալը ցաւ ի սիրտ կրն-
թեռնումք՝ զի

« Ի լուսանալ տասներորդ աւուր
ամսեանն Մայիսի՝ իսպառ ցրտահար
եղեն այգեստանեայք քաղաքիս, ո-
րով բաղմամբիւ Հայազգի ժողովուրդք
տեղւոյս ենթարկեցան անփոխարինելի
վնասուց. քանզի՝ գլխաւոր աղբիւր
բարեկեցութեան սոցին էին բերք այ-
գեաց, յորոց զրկին գրեթէ զամս եր-
կուս կամ գերիս։

« Զարդիս՝ Վեհափառ Տէր՝ համադ-
գայինք մեր գտանին առհասարակ ի
նեղսակիր վիճակի՝ նա մանաւանդ՝ մի-
ջին եւ ստորին դասակարգք, որք ոչ մի-
այն յայսմհետէ չունին նիւթական հը-
նարս մշակելոյ եւ խնամելոյ զայգիս իւ-
րեանց ցվերստին պողաբերութիւն, այլ
եւ՝ բազումք ի սոցանէ կարօտին աւուրն
պարենի հայթայթելոյ ընտանեաց իւ-
րեանց։ Առ որ անսովոր գոլով՝ պատ-
կառանս համարէին ինքեանց խնդրել

յայլուստ զողորմութիւն. . . . : Այլ ի
վերայ այսր ամենայնի ցաւալի է՝ Վե-
հափառ Տէր՝ վիճակ կեցութեան բա-
րեպաշտօն ժողովրդականացս, որք միշտ
լեալ են օգտաւէտ եկեղեցւոյ եւ կարե-
կից վշտացեալ ազգայնոց իւրեանց ա-
ռատաձեռն տրօք, իսկ այժմ՝ յակա-
մայս թշուառացեալ յանակնունելի հա-
րուածոց անողոր բնութեան կարօտին
նպաստից եւ կարեկցութեան։

Աւստի Վեհ. Հայրապետ ոչ միայն յա-
տուկ օրհնութեան Կոնդակ փութացոյց
իւր սիրելի եւ վշտացեալ որդիքը միւս-
թարելոյ համար, այլ եւ ի նպաստ չը-
քաւորացն՝ տեղական Թեմ. Ատենից՝
Հոգեւոր Կառավարութեանց եւ Գոր-
ծակալութեանց միջոցաւ՝ Աստրախա-
նայ, Պեսարապիա — Ն. Նախիջեւանու
եւ Ղարապաղու վիճակաց մեր եղբայրնե-
րէն կարելին փութով կամաւոր նուէր
եւ օգնութիւն հաւաքելով հասուցա-
նելոյ համար՝ անհրաժեշտ տնօրէնու-
թիւնը եւ պատուէրը ուղղեց Ս. Էջ-
միածնի Սինօգին։

Ինչպէս Թեմ. Վերատեսուչ Արժ.
Կարապետ Վարդապետի յետագայ գը-
րուածքէն կտեսնեն ընթերցողք, նաեւ
յերեւան ամսոյս մէջ եւ ուրիշ անգամ
քանիցս պատահած հեղեղէն չարաչար
վնասուած տեղացի մերաղնէից օգ-
նելոյ համար՝ Վեհ. Հայրապետ պա-
տուիրեց Սինօգին՝ Տփլսեաց՝ Երեւա-
նու եւ Շամախույ վիճակաց մեր եղ-
բայրներէն ի նպաստ եւ յօգնութիւն
Երեւանցի տառապեալ եղբարցս կամա-
ւոր նուէրներ հաւաքել՝ նոյնպէս տե-